ՍԵՐՎԱՆՏԵՍԻ «ԽՐԱՏԱԿԱՆ ՆՈՎԵԼՆԵՐԸ»

Սերվանտեսը 1613 թվականին հրատարակած իր «Խրատական նովելներ»-ի նախաբանում գրել է. «Ես առաջինն սկսեցի իսպաներենով նովելներ գրել, քանի որ բազմաթիվ նովելները, որ լույս են տեսնում, թարգմանված են օտար լեզուներից. սրանք իմն են, այլ ոչ թե արտագրված կամ գողացված»[1]: Սխալ կլիներ, հիարկել, պնդել, թե Իսպանիայում նովելներ ընդհանրապես չէին գրվում, սակայն այդ ժանրը լայն տարածում չուներ: Այս առումով պետք է ասել, որ Սերվանտեսի վերոհիշյալ ստեղծագործությունն ազգային բովանդակությամբ նովելների անդրանիկ ժողովածուն էր: Հեղինակն իր ժողովածուն անվանում է «Novelas ejemplares» («Խրատական նովելներ»): «Ejemplar» նշանակում է խրատական, օրինակելի, սակայն պետք է ուշադրություն դարձնել, որ ածականը ծագել է «ejemplo» բառից, որը օգտագործվում էր «կյանքի օրինակ» իմաստով: «Ես նովելներն անվանեցի «խրատական»,- գրում է Սերվանտեսը,- և իսկապես, եթե ուշադիր նայեք, չկա ոչ մի նովել, որից հնարավոր չլինի դաս քաղել»[2]: Ժամանակակիցների վրա «Խրատական նովելներ»-ը մեծ տպավորություն գործեցին ոչ միայն իրենց խրատական տարրերով, այլև գեղարվեստական բարձր արժանիքներով:

Սերվանտեսյան նովելների հիմնական ուղղվածությունը ռոմանտիկական կամ իրապաշտական տարրերով հագեցած սիրային բնույթն է: Եվ բնորոշն այն է, որ դրանք ունեն մի կերպար, որն ազատվել է հին նահապետական կապերից և ճանապարհ է հարթում իր համար:

«Խրատական նովելներ»-ը տասներկուսն են՝ գրված տարբեր ժամանակահատվածներում, սակայն հեղինակը դրանք դասավորել է ոչ թե ժամանակագրական հերթականությամբ, այլ հիմք է ընդունել գեղարվեստական սկզբունքը՝ ռոմանտիկական սիրային նովելից հաջորդում է ռեալիստականը:

Ռոմանտիկական նովելներում Սերվանտեսը արտահայտել է իր մարդասիրությունը: Նա գովերգում է մարդու մեծահոգությունը, անշահախնդրությունը, սիրո համար ինքնազոհությունը: Գրողն իդեալականացնում է մարդուն: Նովելները երջանիկ ավարտ ունեն և արտահայտում են Սերվանտեսի հավատը դեպի սերը, երիտասարդությունը, երջանկությունը: Այսպիսի ավարտները

[1] Сервантес М., "Назидательные новеллы", "Худ. лит.", Москва, 1982, стр. 12.
[2] Նույն տեղում:

հաճախ անհավատալի են թվում, սակայն հենց սա է մարդասիրությունը: Բոլոր նովելներում էլ գործում է հենց այս սկզբունքը:

Առաջին նովելը «Գնչուհին» է, որը ռոմանտիկական բնույթ ունի: Այն նման է հեքիաթի, որտեղ հաղթանակում է սերը: Հեղինակը պատկերում է գնչուների բարքերը ներկայացնելով մի պարկեշտ գնչուհու կերպար: Պրեսիոսան (Թանկարժեք) նովելի հերոսուհին, խելամիտ է, նրան դաստիարակել է ծեր գնչուհին, որից էլ նա դասեր է քաղել: Այս հերոսուհին պիկարոյական վեպի հիրոսուհիների հակապատկերն է, և նրա համար գլխավորը պատիվն է: Գնչուներն ունեն իրենց օրենքները, ամուսնության մեջ շատ հավատարիմ են ու խիստ: Ընտանիքը սրբություն է, որը պղծողը պատժվում է գնչուական օրենքի ամբողջ խստությամբ: Ի տարբերություն այս հերոսների՝ պիկարոյական վեպերի հերոսների համար (Գուսման, Ռուֆինա) ընտանիքը դրամապանակ էր, որը միշտ լի է ոսկեդրամներով: Առանց ամոթի նրանք իրենց հարազատներին դրդում էին անառակության կամ էլ խաբում միամիտ ամուսնուն:

Պրեսիոսային սիրահարվում է մի երիտասարդ, որը համաձայնում է ապրել գնչուների հետ՝ նրանց օրենքներով: Նա տեսնում է, որ հասարակությունը շինծու է, ձևական, իսկ գնչուներն ապրում են մարդկային կանոններով: Անդրեսը՝ Պրեսիոսայի սիրեցյալը, ապրելով գնչուների մոտ, կյանքի դասեր է քաղում և բարելավում իր մարդկային կերպարը: Հետագայում պարզվում է, որ գնչուհին մեծահարուստի աղջիկ է, և այն արհեստական պատնեշը, որը գոյություն ուներ Պրեսիոսայի և Անդրեսի միջև, վերանում է:

«Մեծահոգի երկրպագուն» նովելի հիմքում նույնպես ընկած է սիրո պատմություն: Ռիկարդոն սիրում է Լեոնիսային, սակայն նրանց երջանկությանը խանգարում է չար բախտը. ծովահեններն առևանգում են Լեոնիսային, և նա դառնում է մի շահի հարճ: Երկար տառապանքներից հետո Ռիկարդոն և Լեոնիսան միանում են ու երջանիկ ապրում Իսպանիայում: Բացի ռոմանտիկական երանգից, որն այստեղ գերիշխում է, այս նովելում կա իրականության ճշմարիտ պատկերում ևս: Օրինակ՝ Սերվանտեսը նկարագրում է աստիճանավորների գործի անցնելու եղանակը, այն է՝ նրանք կարող են նվերների և գումարի միջոցով ցանկացած պաշտոն ստանալ: «Այսպես են դասավորում գործերը այս կայսրությունում, որտեղ ամեն ինչ հիմնված է բռնության վրա, որն ստույգ հատկանիշ է այն բանի, որ այն երկարատև չէ»[3],- գրում է հեղինակը: Բայց արդյոք Իսպանիայում նույնը չէ՞ր կատարվում: Անկասկած, Սերվանտեսն այս տողերը գրել է հենց Իսպանիայի մասին, որտեղ կաշառակերությունը հասել էր ահավոր չափերի:

---

[3] Сервантес. Назидательные новеллы Сервантеса, "Академия", Москва. Ленинград, 1934, стр. 155

Ինչպես արդեն նշել ենք, ռոմանտիկական նովելներին զուգընթաց կան նաև ռեալիստական նովելներ: «Մեծահոգի երկրպագու»-ին հաջորդում է «Ռինկոնետե և Կորտադիլիո»-ն, որը պատկանում է «պիկարոյական վիպակի» ժանրին: Այս նովելի հերոսները՝ Ռինկոնետեն և Կորտադիլիոն, ծանոթանում են ճանապարհին (այս գիծը բնորոշ է նաև պիկարոյական վեպերին. հիշենք, որ Գուսմանը, Ռուֆինան ծանոթանում էին իրենց գործընկերների և զոհերի հետ հենց ճանապարհին) և որոշում են միասին իրենց բախտը փորձել մեծ քաղաքում: Նրանք չունեն որոշակի մասնագիտություն և շուտով հայտնվում են գողերի մի խմբի մեջ: Մինչև գողերի հետ ծանոթանալը նրանք զբաղվում են մանր գողությամբ, թալանում ճանապարհին հանդիպած մարդկանց: Սևիլիայում նրանք բեռնակրություն են անում: Ռինկոնետեն առանց խղճի խայթի սկսում է խոսել Ահեղ դատաստանի մասին և ասում, որ գողերն ու խաբեբաները կստանան իրենց արժանի պատիժը, սակայն սա չի խանգարում նրան վայելել գողացած դրամը և նորանոր գողություններ կատարել: Մի «բարի» մարդ երիտասարդներին ծանոթացնում է պարոն Մանիպոդիոյի հետ, որը գողերի ղեկավարն էր և ուսուցիչը: Վերջինս էլ երիտասարդներին բացատրում է «նուրբ արհեստի» մանրամասները: Մոնիպոդիոն կեղծ հավատացյալ էր, որը թալանածի մի մասը տալիս էր եկեղեցուն: Բայց դա չի խանգարում նրա աշակերտներին եկեղեցում գողություն անել և սրբապղծել տաճարը:

Սերվանտեսն ընթերցողին է ներկայացնում գողերի կանոնակարգը. նրանք ամբողջ ավարը բաժանում են հավասար մասերի: Այդ գողերն ունեն նաև իրենց հովանավորները՝ Նրանցից է, օրինակ, Ալգվասիլը՝ դատական կատարածուն: Օրենքը չի գործում, քանի որ օրենքի պաշտպաններն իրենք են խախտում այն: Հեղինակը պատկերում է նաև անառակ կանանց, որոնք, սակայն, մոմ են վառում հանուն հոգու փրկության: Այդ հերոսների միջոցով գրողը ներկայացնում է Իսպանիայի կեղծ հասարակությունը, ցույց տալիս, որ արտաքին բարոյականության տակ թաքնված է ահավոր մի հրեշ: Գողերն զբաղվում էին նաև մանր խուլիգանությամբ: Նրանք դրամի դիմաց ծեծում էին, դանակով վիրավորում, կարող էին նույնիսկ սպանել: Ըստ գողերի իրենք պատժում էին մեղավորներին: Գողերի խմբում գործում են նույն կանոնները, ինչ որ հասարակության մեջ: Ցույց տալով գողերի ապրելակերպը և բարոյական կերպարը՝ Սերվանտեսը ցույց է տալիս բարոյալքված հասարակությունը, որը կորցրել է ճիշտ կողմնորոշումն ու խարխափում է խավարի մեջ: Երբեմն գողերի խումբն ավելի դրական է, քան հասարակությունը: Այստեղ գործում են հավատարմությունը, ընկերությունը, փոխադարձ օգնությունը. մեծերը սատարում են փոքրերին, սովորեցնում կյանքի օրենքները:

«Անգլիական իսպանուհին» նովելը պատկանում է ռոմանտիկական նովելների խմբին: Սա մի երիտասարդ աղջկա պատմություն է, որին մանուկ

հասակում առանձնանում են ծովահենները: Ի դեպ, առանձնացումը խիստ բնորոշ է Սերվանտեսի նովելներին, որը, անշուշտ, ռոմանտիկական տարր է: Իսաբելան և Ռիկարեդոն սիրահարվում են, ոչինչ չի խանգարում երիտասարդների երջանկությանը, սակայն բախտը երես է թեքում նրացից: Թագուհին որոշում է իր համաձայնությունը տալ Իսաբելայի և Ռիկարեդոյի ամուսնությանը, սակայն պայման է դնում. ժամանակ է տալիս, որպեսզի երկուսն էլ ստուգեն իրենց զգացմունքը: Ռիկարեդոն հանգամանքների բերումով փրկում է Իսաբելայի ծնողներին, որն էլ օգնում է սիրահարներին կրկին միասին լինել: Սակայն նախանձ մի կին թունավորում է Իսաբելային, և նա կորցնում է իր գեղեցկությունը: Ռիկարեդոն չի հրաժարվում իր սիրուց և պատրաստ է ամուսնանալ տգեղ Իսաբելայի հետ: Հեղինակը ցույց է տալիս հերոսի սերը, նա համոզված է որ սիրող սիրտը չի նայի արտաքին տեսքին: Սերվանտեսը կարևորում է հոգեկան գեղեցկությունը: Եվ ահա հրաշքով աղջկան է վերադառնում նախկին գեղեցկությունը: Սա մի փորձություն էր, որով պետք է անցնեին հերոսները համոզվելու համար իրենց զգացմունքների մեջ: Պատմությունն այսքանով չի ավարտվում: Իմանալով իր նշանածի մահվան մասին Իսաբելան որոշում է միանձնուհի դառնալ, և հենց այդ պահին հայտնվում է Ռիկարեդոն, և նովելը երջանիկ ավարտ է ունենում: Այս նովելը մյուսներից տարբերվում է պատումի նկարագրական բարձր արժեքով, և պատահական չէ, որ սերվանտեսագետներն այնտեղ հատկապես գնահատում են հեղինակի պատմելու արվեստը:

«Լիցենցիստ Վիդրիերան» նովելն աչքի է ընկնում իմաստասիրական խոր խնդիրների արծարծումներով: Սերվանտեսի հերոսը իրեն Վիդրիերա է անվանում, քանի որ նա իրեն ներշնչել է, որ ապակուց է: Այս անունը երկու իմաստ ունի. «Vidriera» նշանակում է պատուհան, և, միևնույն ժամանակ, «hombre vidrioso» նշանակում է անմատչելի, գերզգայուն մարդ: Հերոսը դժգոհ է իրեն շրջապատող աշխարհից: Սա երգիծական նովել է, որի միջոցով Սերվանտեսը պատռում է հասարակության դիմակը: Քանի որ երգիծական ժանրը շատ վտանգավոր էր ինկվիզիցիայի դարաշրջանում, ուստի հեղինակն իր ասելիքը ներկայացնում է «գիտակից խելագարների» միջոցով: Երիտասարդը, պատասխանելով անցորդների հարցերին, տալիս է ժամանակակից Իսպանիայի իրական պատկերը: Տոմասը շրջագայում է և որոշ ժամանակ հետո վերադառնում է Իսպանիա, այստեղ նրան է սիրահարվում մի կախարդ և դեղ է տալիս նրան, որպեսզի Տոմասն էլ սիրի իրեն: Դեղը խմելուց հետո նա հիվանդանում է ու երևակայում, թե ապակուց է: Վախենալով, որ կջարդվի, նա հագնում է լայն վերնաշապիկ և ուտում է շատ զգուշությամբ: Նա շրջում է փողոցներով և խորհուրդներ տալիս մարդկանց կամ էլ իր մտքերն է արտահայտում: Նա խորհուրդ է տալիս մի մարդու, որի կինը փախել էր սիրեկանի հետ, մոռանալ նրան և չփորձել փնտրել, մի տղայի էլ խորհուրդ է տալիս ենթարկվել հորը...

Վիդրիերայի միջոցով Սերվանտեսն արտահայտում է իր կարծիքը բանաստեղծների մասին: Վիդրիերան քննադատում է կառապաններին՝ մեղադրելով գողության մեջ: Նավաստիները, ըստ նրա, կոպիտ են, նրանք լավ եղանակին գործ են անում, վատ եղանակին՝ ձեռքերը ծալած նստում: Բացասաբար է վերաբերվում նաև դեղագործներին նրանց մեղադրելով խաբեբայության մեջ: Վատ բժշկներին նա համարում է պետության թշնամիներ: Նա ասում է, որ դատավորը կարող է մեզ ունեցվածքից զրկել, առևտրականը շատ թանկ գին ասել, սակայն ոչ ոք իրավունք չունի կյանքից զրկել: «Մինչ դու քնած ես, դու չես նախանձում, քանի որ երազում դու պակաս չես նրանցից, ում նախանձում ես»,- ասում է երիտասարդը: Նախանձը չարիք է, որի մասին խոսում է հեղինակը: Նա պատռում է նաև դերձակների, կոշկակարների, խոհարարների դիմակները: Արձակագիրն անդրադառնում է հասարակության զանազան խավերին և ցույց տալիս, որ նրանք բոլորը խաբում են ու գողանում: Երբ մեկը հարցնում է՝ ով է աշխարհի ամենաերջանիկ մարդը, նա պատասխանում է՝ «nemo» (ոչ ոք): Նորավեպի հերոսը, սակայն, ամենից շատ ատում է այն մարդկանց, որոնք ներկում են իրենց մորուքները: Արանք երկերեսանիներն են: Վիդրիերան շատ սուր լեզու ունի: Եկեղեցու մասին նա ասում է. «Եկեղեցին ճակատամարտի վայր է, որտեղ զոհվում են ծերերը, հաղթանակում՝ երեխաները, և իրենց հաղթանակն են տոնում կանայք», քանի որ ծերերին եկեղեցում թաղում են, երեխաներին՝ կնքում, կանանց պսակում:

Վիդրիերայի հիվանդությունը շարունակվում է երկու տարի: Այդ ընթացքում նա ճշմարտությունն էր ասում, սակայն ապաքինվելով ուրիշների նման կորցնում է իրականությունը ճիշտ գնահատելու ունակությունը: Երբ նա ապակուց էր, նա պայքարում էր իրականության դեմ, փորձում էր կյանք սովորեցնել մարդկանց: Մեր կարծիքով՝ Սերվանտեսն ապակուց է դարձնում իր հերոսին, քանի որ ճշմարտությունը շատ նուրբ է և հաճախ չի դիմանում ռեալությանը և ստիպված է լինում հարմարվել ժամանակի պայմաններին: Սերվանտեսի կերպարը խոսում է հասարակության արատների մասին, բացահայտում դրանք: Սակայն նա էլ մտնված է ծախողման, քանի որ ապրում է այդ հասարակության մեջ:

«Արյան ուժը» նովելը պատմում է մի երիտասատդ աղջկա՝ Լեոկադիայի մասին, որին Ռոդոլֆոն 16 տարեկանում առևանգում է ու պատվազրկում: Լեոկադիան երեխա է ունենում և տարիներ անց հայտնվում է այն նույն տանը, որտեղ պատվազրկվել էր: Լեոկադիան ամեն ինչ պատմում է Էստեֆանիային Ռոդոլֆոյի մորը, որն էլ խոստանում է ամեն ինչ շտկել: Տեսնելով Լեոկադիային Ռոդոլֆոն սիրահարվում է և շուտով իմանում, թե ով է այդ գեղեցկուհին: Նրանք ամուսնանում են և ապրում երջանիկ: Այսպես ամեն ինչ ընկնում է իր տեղը, և բարին հաղթանակում է: Այս նովելում մենք հանդի-

պում ենք մարդկային տարբեր տեսակների: Ռոդոլֆոն իր հասարակության և շրջապատի արդյունք է: Նա վստահ է, որ երբեք չի պատժվի, օրենքը նրա կողմն է, քանի որ նա հարուստ է: Սերվանտեսը համոզված է, որ շրջապատն է դարձրել Ռոդոլֆոյին այնպիսին, ինչպիսին նա կա: Լեոկադիայի ծնողները նույնպես այդ հասարակության արդյունք են: Նրանք նախընտրում են թաքցնել ամեն բան, որպեսզի չպատվազրկվեն, իրենց վրա են վերցնում իրավիճակի ամբողջ ծանրությունը և չեն բողոքում, այլ համակերպվում են: Հեղինակը միտումնավոր է սիրային բոլոր նովելները լավ ավարտում, քանի որ հավատում է սիրուն և մարդասիրությանը:

Սերվանտեսի մարդասիրական հայեցացակարգն իր ամբողջ խորությամբ բացահայտվում է «**Խանդոտ էտրեմադուրցին**» նովելում, որը դասվում է ռեալիստական նովելների շարքին: Մի հարուստ ծեր մարդ՝ Կառիսալեսը, որն ամբողջ կյանքի ընթացքում իր քրտինքով փող է աշխատել, ժառանգ ունենալու նպատակով որոշում է ամուսնանալ: Նա գտնում է մի հարմար աղջկա, պայմանավորվում նրա ծնողների հետ և սկսում տուն կառուցել, որը շրջապատում է հսկայական պարսպով: Նա աշխարհի ամենախանդոտ մարդն էր և որոշում է պատնեշվել այլոց աչքերից: Նրա կինը, չհասկանալով, ենթադրում է, որ բոլոր ամուսնացածներն էլ այդպես են ապրում: Կառիսալեսն ամեն ինչով ապահովում է իր կնոջը՝ բացի ազատությունից: Սակայն ամեն ինչ չէ, որ լինում այնպես, ինչպես մարդն է ծրագրում: Մի երիտասարդ խաբեությամբ մտնում է նրանց տուն և զրույցի բռնվում Լեոնորայի հետ: Կառիսալեսը, տեսնելով այդ, իրեն վատ է զգում և այնուհետև մահանում: Սակայն նա իր ամբողջ ունեցվածքը կտակում է կնոջը Լեոնորային, մահից առաջ էլ օրհնում է Լեոնորային ու երիտասարդին Լուայսային: Ի զարմանս ընթերցողի՝ այրին, սակայն, չի ամուսնանում և կուսանոց է գնում: Այս ավարտը համոզիչ չի թվում, քանի որ դժվար է պատկերացնել, որ երկար տարիներ բանտարկյալի կյանքով ապրելուց հետո գեղեցիկ, երիտասարդ, հարուստ կինը, հնարավորություն ունենալով ապրել այնպես, ինչպես կամենա, նախընտրում է կուսանոց գնալ: Սերվանտեսն այսպես է բացատրում նովելի ավարտը. «Այս նովելն ակնառու ցույց է տալիս՝ որքան քիչ պետք է հույսը դնել բանալիների, պտուտանների և պատերի վրա, երբ մեր կամքն ազատ է»:

Այուս կերպարը, որն արժանի է հիշատակման դուենիան է՝ տարիքավոր դաստիարակչուհին: Բոլոր նովելներում այս կերպարը բացասական է: Այս կինը միայն իր օգուտի մասին է մտածում. նվերների և դրամի համար պատրաստ է պատվազրկել իր տիրուհուն, խայտառակել տիրոջը: Խստաբարո զգեստի մեջ օձ է թաքնված, որն ամեն վայրկյան կարող է խայթել: Սերվանտեսը նախազգուշացնում է խանդոտ ամուսիններին և միամիտ աղջիկներին և հուսով է, որ ընթերցողը դաս կքաղի նովելից:

«Տիկին Կոռնելիա» նովելում Կոռնելիա Բենտիվոլիոն քաղաքի գեղեցկուհիներից է, որն ապրում է իր եղբոր հետ: Տղան նրան փոխարինում էր ծնողներին, որոնք մահացել էին երիտասարդ տարիքում: Եվ ահա դոն Խուանը և դոն Անտոնիոն պատահաբար հայտնվում են երիտասարդ աղջկա տան մոտ, որտեղից էլ ծայր է առնում խճճված պատմությունը: Կոռնելիան սիրեկան ուներ, որից արդեն երեխա էր ունեցել: Մի գիշեր նա երեխային հանձնում է դոն Խուանին համոզված, որ նա է երեխայի հայրը: Դոն Անտոնիոն նույն գիշերը փրկում է Կոռնելիայի սիրեկանին: Ստացվում է այնպես, որ նրանք փոխանակում են գլխարկները, և մի վտանգավոր պահի հենց այդ գլխարկն էլ փրկում է նրանց դավաճանությունից: Այս նովելում կարևոր է ճանաչման պահը: Ինչպես և «Արյան ուժը» նովելում, հերոսները, չիմանալով իրար, առարկաների միջոցով են ճանաչում միմյանց: Կոռնելիայի եղբայրը որոշում է վրեժխնդիր լինել, սակայն երկու ընկերների միջամտությամբ ամեն ինչ հարթվում է. ընտանիքը միավորվում է, իսկ դոն Անտոնիոն և դոն Խուանը դառնում են ընտանիքի լավագույն բարեկամները: Այս նովելում ևս Սերվանտեսը տեսնում է մարդկանց մեջ լավ կողմեր ու վեր հանում դրանք:

Արձակագիրը «Գերազնիվ ամանլվիկը» նովելում նկարագրում է գոյություն չունեցող լավ դաստիարակված, բարեկիրթ, ազնիվ պիկարոների, պանդոկի տիրոջ բարոյական աղջկան: Նովելի հերոսներն են դոն Դիեգոն և դոն Տոմասը, որոնք լքում են իրենց ծնողներին և գնում ընդունվելու տերսիոս (քաղաքային բանակի զորամաս): Ճանապարհին կանգ են առնում մի պանդոկում, որտեղ էլ հանդիպում են գերազնիվ ամանլվիկին՝ Կոնստանսային: Ի տարբերություն պիկարոյական վեպերի պանդոկապանների այս նովելի պանդոկապանը բարի է, մարդասեր, ազնիվ: Տարիներ առաջ նա իր տան շեմին երեխա էր գտել ու դաստիարակել սեփական երեխայի նման: Նովելի հերոսները երիտասարդ են, ազնիվ, խելամիտ: Նրանցից մեկը՝ Տոմասը, սիրահարվում է ամանլվիկին, սակայն չի հետապնդում նրան, այլ միայն սիրային նամակներ է գրում, որոնք չի առաքում: Նովելում հեղինակը հակադրում է հասարակ աշխատավորին ազնվականությանը. պանդոկապանն ավելի ազնիվ և գթասիրտ է, քան մեծահարուստը:

Հաջորդ նովելը՝ «Խաբեական հարսանիք»-ը, սկսվում է նրանով, որ հանդիպում են երկու ծանոթներ պորուչիկ Կամպուսանոն և լիցենցիատ Պերալտան. Եվ ահա նրանցից առաջինն սկսում է պատմել իր ամուսնության մասին: Նա ծանոթացել էր մի հարուստ, բարետես կնոջ հետ: Տեսնելով կնոջ հարստությունը Կամպուսանոն սիրային նամակներ է սկսել գրել: Կինը ևս անտարբեր չի գտնվել. հրավիրել է տուն, պատմել իր մասին: Երիտասարդը, սակայն, մտովի արդեն հաշվում էր տան և կահավորանքի գինը: Տիկին Էստեֆանիան բարեկիրթ կին էր թվում, որը ցանկանում էր ամուսնանալ և

ընտանիք կազմել: Շուտով նրանք ամուսնանում են, և առաջին օրերին էստեֆանիան օրինակելի կնոջ նման ճաշ էր պատրաստում ու կատարում ամուսնու ցանկությունները: Սակայն մի օր հայտնվում է տան իսկական տերը: Ամեն ինչ կեղծ է դուրս գալիս: Հերոսը, որը սիրահարվել էր հարստությանը, հասկանում է, որ խաբվել է: Վերջում նրա կինը վերցնում է ամուսնու հարստությունը՝ ոսկե շղթաները և փախչում: Սակայն հեղինակն ավելի է սրում դրությունը. ոսկե շղթաները լոկ արտաքինից էին ոսկե, իրականում արժեին տասը էսկուդո: Խաբեբան գողանում է խաբեբայից, բայց գողացվածը ոչինչ չարժե: Այսպես Սերվանտեսը պատժում է երկուսին էլ: Սակայն եթե էստեֆանիան միայն նյութապես է տուժում, ապա Կամպուսանոն՝ նաև ֆիզիկապես. էստեֆանիայի հետ ամուսնությունից հետո հիվանդանում է մի շարք հիվանդություններով:

Այս նովելն իսկական խրատ է բոլոր նրանց համար, ովքեր դրամի համար են ընտանիք կազմում, ովքեր իրենց բնորոշ վարվելակերպով չեն ներկայանում հասարակությանը: Սերվանտեսի հերոսն անամոթ է, իր ծանոթին չափազանց անկաշկանդ է պատմում իր իսկ կողմից հրահրված «սիրո» քստմնելի պատմությունը: Այդ բոլոր տեսարաններով Սերվանտեսը ներկայացնում է իսպանական հասարակությունը, ցույց է տալիս նրա բարոյալքվածությունը:

«Նովել շների զրույցի մասին»՝ այս խորագիրն է կրում նովելաշարն ամփոփող վերջին երկը: Այն թե արտաքին կառուցվածքով, թե բովանդակությամբ կապված է նախորդի հետ: Պատումն ընթերցում է լիցենցիատ Պերալտան, իսկ գրել է այն Կամպուսանոն, որը, հիվանդանոցում գտնվելով, լսել է երկու շների խոսակցությունը և գրի առել այն: Իր առաջին տիրոջ մոտ Բեռգանսան ծառայում էր որպես ցլերի վրա հարձակվող շուն: «Չարիք գործելը ի ծնե մեր հատկությունն է, և այդ իսկ պատճառով դրան սովորելը դժվար չէ»[4],- ասում է նա: Այս նույն բառերը կարելի է ասել մարդկանց մասին, քանի որ մարդը մարդուն գայլ է այն հասարակության մեջ, որտեղ ապրում էր Բեռգանսան: Փախչելով իր տիրոջից՝ Բեռգանսան հանդիպում է ոչխարների հոտի ու հովիվների: Այստեղ Բեռգանսան տեսնում է իրականության շրջվածությունը: Այն, ինչ երևում է, իրականություն չէ. հովիվները, որ պետք է պահպանեին ոչխարներին գայլի հարձակումներից, իրենք են իսկական գայլերը: Ժամանակ առ ժամանակ նրանք սպանում էին ոչխարներին և իրենց արարքը բարդում գայլի վրա: Այս պատմությունը լսելով՝ մյուս շունը՝ Սիպիոնը, ասում է. «Չկա ավելի վտանգավոր և խորամանկ թշնամի, քան տնային գողը»: Բեռգանսայի հաջորդ տերը երկու տղա ուներ, որոնք շատ սիրում էին շանը: Սակայն այստեղ էլ նրա բախտը չի բերում: Շուտով Բեռգանսային պահում են որպես

---

[4] Сервантес "Назидательные новеллы" Худ. Лит. Москва, 1982, стр. 254.

պահակ: Նովելի ժանրին բնորոշ՝ այստեղ էլ, սակայն, շրջվում է բախտի անիվը, և հաջողությունները տեղի են տալիս դժբախտությունների առջև:

Բեռգանսայի միջոցով հեղինակն իր կարծիքն է հայտնում նաև կանանց արատավոր բարքերի մասին: Այսպես, Բեռգանսան խոհարարուհու գիշերային արկածների ականատեսն է լինում և բացասաբար տրամադրվում նրա նկատմամբ: Հենց այդ հատվածում է Սերվանտեսը խոսում նաև կաշառվածության մասին. նրա հերոսն աչքերը փակում է խոհարարուհու արկածների վրա և չի հաչում, քանի որ ոսկոր ու միս է ստանում նրանից իր լռության դիմաց:

Բեռգանսայի հաջորդ տերը դատական կատարածուն է: Այս տիրոջ մոտ շունը հույս ունի ծառայել մարդուն: Սակայն պարզվում է, որ ալգվասիլը հովիվներից պակաս խաբեբա չէ: Նա կենակցում է մի անառակ կնոջ հետ և նրա միջոցով դրամ շորթում միամիտ մարդկանցից: Բեռգանսան հանդիպում է նաև «Ռինկոնետե և Կորտադիլիո» նովելի հերոսներից մեկին՝ Մոնիպոդիոյին, որն ավազակապետ էր: Դատական կատարածուն պայմանավորվածություն ուներ նրա հետ և ծածկում էր գողերին ու խաբեբաներին: Այսպես օրենքի մարդը ինքն է խախտում այն: Հերոսներն էլ մարդիկ են, որոնք բախտի բերմամբ կենդանու կերպարանք են ստացել: Սերվանտեսի մոտ դա կախարդության արդյունք է: Կամաչան՝ կախարդը, ասել է, որ երիտասարդներին կվերադառնա իրենց մարդկային կերպարանքը, երբ նրանք տեսնեն ամբարտավանների գլորվելն ու թշվառականների բարձրանալը: Այս տողերով Սերվանտեսը հույս է հայտնում, որ հասարակությունը, որը թաթախված է ամբարտավանության մեջ, կհասկանա իր վիճակը, կփորձի դուրս գալ ստեղծված իրավիճակից, որ ազնիվ աշխատավորն ի վիճակի կլինի արհեստով իր ապրուստը հոգալ:

Ի տարբերություն «Գնչուհին» նովելի, որտեղ Սերվանտեսը գովաբանում է գնչուներին, այս նովելում նա բացահայտում է նրանց խաբեությունները ու խարդավանքները: Եթե «Գնչուհին» ռոմանտիկական է, մարդասիրությունը այնտեղ գլխավոր գիծն է, և այդ իսկ պատճառով էլ գնչուները լավ լույսի տակ էին ներկայացված, ապա «Շների զրույցը» նովելը ներկայացնում է Իսպանիայի ծանր վիճակը, և գնչուները վրձնահարված են ճշմարտացի երանգներով:

Այսպիսով, «Խրատական նովելներ»-ում Սերվանտեսը խոսում է հասարակության բարոյալքվածության, անմարդկային վարվելակերպի մասին, քննադատում ամբարտավաններին, բարոյազուրկ կանանց, գողերին, խաբեբաներին... Այսօր էլ այդ նովելաշարը խիստ արդիական է և չի կորցրել իր նշանակությունը, քանի որ հասարակությունը տառապել և տառապում է մարդկային զանազան արատներով: